

THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.

ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ՔԱՅ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐՈՒ

Ա Ջ Պ Ա Յ Ի Ն, Գ Ր Ա Կ Ա Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Վ. ՏԱՐԻ, ԹԻՒ 19

ՆՈՒ ԵՈՐՔ, ՇԱԲԱԹ, ՄՈՐՏ 19, 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Միացեալ Նահանգացի և Սպանիոյ մէջ տեղեկացած դժուարութիւններն օրէ օր կը մեծնան: Պատրաստութիւններն կը շարունակուին. մարտանաւեր կը գնուին ու սպառնալիքներ կ'ըլլան երկուստէք: Ամերիկեան բանակին մեծ մասը հրաման ստացաւ դէպի ծովեզր շարժելու, ուր բոլոր բերդերը ու ամրութիւններն պաշտպանելու համար մեծ քանակութեամբ զէնք ու մթերք ընդունած են: Նահանգաբնակներն կ'ամրացուին մեծ փոստով: Ջուրերուն տակ նորանոր թօրփիւններ կը շարունակուին պաշտպանութեան համար: Անցեալ շաբթու 50 միլիոն տոլարի վարկը քուէարկելէ անմիջապէս վերջը՝ Անգլիական, Յըրանասական ու Գերմանական այլևայլ տուններ զէնք, մարտանաւ և այլ պատերազմական պէտքեր առաջարկեցին Մ. Նահանգաց: Քանի մ'օր առաջ Պրազիլիոյ նոր շինել տուած երկու գրահաններն ծախու առնուեցան և քիչ առնելէ կուգան միանալ Լնքըլ Սամի նաւային գործութեան:

Մէյնի քննիչ յանձնարարու մըն դեռ իր պաշտօնական տեղեկագիրը չմատոյց կառավարութեան. և հետևաբար ոչ ոք կրնայ վստահապէս ըսել թէ պատերազմ պիտի ըլլայ կամ ոչ: Երկու պատճառներ կան որ կրնան ընդհարում յառաջ բերել Ամերիկայի և Սպանիոյ մէջ տեղ: Նախ՝ Անգլիոյ, որ Եւրոպական քաղաքականութեան մէջ բոլորովին առանձին դիրք մը բռնած, Տաճկաստանի և ծայրագոյն արևելից մէջ ստիպուած է գրուել ծով ամեն խնդիրներու մէջ, Միացեալ Նահանգաց հետ կը փոփոքի դաշնակցութիւն մը կնքել: Թէև Ամերիկեան ժողովուրդը հակակրօթիւն մ'ունի անգլիոյ դէմ, բայց երբ պատերազմի մէջ Անգլիոյ ուղղակի կամ անուղղակի կերպիւ օգնէ ասոնց, այդ հակակրօթիւնն համակրօթեան կը փոխուի ու Անկլո-սաքսոն ցեղերու միութիւնը աշխարհի քաղաքականութեան մէջ մեծ փոփոխութիւն մը յառաջ կը բերէ: Ուրեմն շատ հասանական կը թուի թէ նոյն իսկ Անգլիոյ դրոշմամբ պատերազմ ծագի վերջապէս:

Երկրորդ պատճառն ներքին է բուրձովին. երբ Մաք Քինլի նախագահ ընտրուեցաւ, շատ մը խոստումներ ըրաւ ժողովրդին, իմէջ այլոց: Քերամական ներկայ գրութիւնն բարեփոխել, Բայց մինչև հիմայ իր խոստումներով և ոչ մին կրցաւ կատարել և ոչ ալ պիտի կրնայ կատարել ապագային: Եթէ այսպէս շարունակուի նախագահն վստահ է թէ 1900 ի ընտրութեանց ատեն Մր. Պրայն յաջորդ նախագահը պիտի ըլլայ Միացեալ Նահանգաց, ինչպէս որ անցեալ Նոյեմբերի ընտրութիւններէն կարելի էր գուշակել: Արդ շատ հասանական է որ Մաք Քինլի վարչութիւնը պատերազմ հրատարակէ, որպէս զի յաղթութիւնն ապահով է իւր վերջնապետութիւնն երեք տարի վերջ:

Միւս կողմէ Եւրոպական Տէրութիւններն գրեթէ ամենն ալ Սպանիոյ կողմէն են: Երբեք դաշնակցութիւնը յանձն կ'առնէ բացէն օգնել Սպանիոյ, եթէ այս վերջինն խօստանայ դաշնակցութեան մէջ մտնել: Աստիճայ կայսրն ու Իտալիոյ թագաւորը, որք ազգականութեամբ կապուած են Սպանիոյ թագաւորական ընտանիքին հետ, թոյլ չի պիտի տան որ Սպանիա ճգմուի Միացեալ Նահանգաց արծուի գործութեան տակ: Այսպէս ալ Գաղղիոյ չուգեր Սպանիան թշնամացնելով իրեն՝ երեք կողմէ ոչ-բարեկամ երկիրներէ շրջապատուիլ. ասոր համար էր որ անցեալ շաբթու Փարիզի Սպանիական դեսպանը՝ Սինիօր Լէօն Քասթէլլօ Մատրիս կանչուեցաւ՝ իր կառավարութեան հրահանգներն առնելու համար:

Երբ պատերազմ հրատարակուի, ցամաքային Եւրոպան թոյլ չի պիտի տայ որ Քիւպա Սպանիոյ ձեռքէն ելնէ՝ այսպիսի յայտարարութիւն մը ըրած է կ'ըսեն Գերմանիոյ կայսրը:

Բարձրագոյն դուռը մի շրջաբերական զրկեց Եւրոպական Տէրութեանց, որով կը ծանուցանէ թէ Տաճկական գործերն թեանքին չի պիտի վերակոչէ, մինչև որ կրէտէի խնդիրն չի կարգադրուի: Մեծ տէրութիւնը պատասխանեցին թէ կրէտէի խնդիրն ո' և է կապակցութիւն չունի թէպէտ ինչ ոչ: Սուլթանը շատ նեղամտ է այս պատասխանին վրայ: Նոր շրջաբերական մը և՛ կը պատրաստուի այս մասին:

Լօնտոնի Ընթանալու լրագիրը կ'ըսէ թէ Սուլթանը կ'ուզէ իր պար Փաշան կրետէի կառավարիչ կարգել:

ԿՈՄՍ ԴԵԼԻՍԱՆՈՎԻ ԹԱՂՈՒՄԸ

Ռուսական լրագիրներն կը գրեն թէ կոմս Դելիսանովի թաղումը մեծ շքով կատարուած է ի Բէթրպուրկ, Հայոց գերեզմանատան մէջ: Յուդարկաւորութեան ներկայ գտնուած են բոլոր նախարարներն ու բարձրագոյն պաշտօնեայները: Իսկ հողահանգստի պատարագին ներկայ գտնուած են Չարը, Միքայէլ և կոստանդին մեծ դքսերն:

Հանգուցելոյ մահուան պաշտօնական տեղեկագիրն երբ վեհ. Չարին ներկայացուած է անոր (Դելիսանովի) օգնականին կողմէ, Նիքոլա երկրորդ տեղեկագիրն առնելով՝ անոր վրայ գրած է «Անգարման կորուստ»:

ՀԵՌԱԳՐԱՆՈՒՐ

Քանիա, Մարտ 16 — Գերմանական զինուորը կրտէ կղզիէն դուրս ելան:

Կ. Պօլիս, Մարտ 16 — Մեծ յուզում կար ելլալու պարտին մէջ երէկ երկրոյ: Անպահիացի և Բիւրա գործերուն մէջ կռիւ պատահած էր: Պալատին մուտքը անմիջապէս շրջապատուեցաւ և շատ մը ձերբակալութիւններ եղան:

ՀԱՅ ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

Քայում քայքայումը սկսած է... Երկու կենսաւէր ախտեր իրենց առնելի միջբոսնի կենսակեր բանակները դրած են պանդուխտ գործաւոր Հայ երիտասարդութեան կուրծքին տակ, ամբողջ կազմուածքին մէջ... Բանի՛ քանի՛ երիտասարդներ ունինք այսօր մեր մէջ որոնք, հիւժ-ախտի զանազան աստիճաններուն մէջ կը տառապին, կը հալին ու կը մաշին. եւ քանիներ ալ որոնք, անժուժկալութեան իբր ահաւոր պատիժ, վարակուած են ուրիշ ախտով մը:

Երկու ախտաորներն ալ կեանքի և աշխարհի մէջ չէ որ կ'ապրին. դժպիտեցէ՛մ, սմբած, ուժաթափ, կը մախքացած այս երիտասարդները շըրջուեն դիակներ են, որոնք աւելի գերեզմանի անդունդին մօտիկ կ'ապրին քան կեանքի արեւին:

Այսօր քանիներ, վաղը շատեր, օր մըն ալ շատ շատեր:

Վերջերս առիթ ունեցանք այս կէս-մեռ դէմքերէն մէկ քանին տեսնելու. մէկ կատար ալ մէկ օր իսկ չէ կարող շնչել այս երկրի ծխալի, աղաստ և խոնու օդը. աւերիչ միջբոսնիքը շախմատած են թոքերը. ուրիշ հատ մըն ալ այնքան չարաբուած է այդ դուր խոտը, այնչափ սպառած է իւր խեղճ նիւթապի կարողութիւնը, որ աղքատ, անարեւկամ, այս երկրին մէջ գործ գտնելու անյոյս, կը գեղեցիկ ու կը գեղեցիկ. այս վերջինի ցար աւելի դառն է, իւր յուսահատութեան և ամենաթշուառ կացութեան մէջ, խորհրդածութեան նշոյլ մը կը ծագի գլխուն մէջ, և հիմակ կ'զգայ թէ հիւժախտաւորը ամենէն հաճելի մահով մեռած է, բնական մահով միայն, իսկ ինք մեռած է թէ՛ Ֆիլիքսայէս և թէ՛ Բարոյայէս, եւ... մինչև այդ օրը կեղծ, վավաշտ ժպիտներու վարժ երեսին վրայ արցունքներու կաթիլներ կը հոսին, ... ալ կեղծ չէ՛:

Ո՞վ պիտի փրկէ, որո՞նք, այս քանիներ, չէ՛. ասոնք մայր երկրին մէջ կոտորուողներուն չափ մեռած են: Ո՞վ պիտի փրկէ այդ շատերը, մօտ ապագայի այդ սոսկալի ախտերու զոհերը դառնալէն. վէճի տակ չէ որ մեր թոքախտաւորներու 5 էն 4ը արդիւնք են գեճու, անհալի դրամասիրութեան. Հայ գործաւորը կը զրկէ ինքզինքը կտոր մը մաքուր, աննդարար կերակուրէ, քիչ մը շապականած օդէ. եւ այսպէս ամիսներ ու տարիներ. եւ աւերումը ըսկսած է իւր գործը: Իսկ ուրիշ ախտաւորներն ալ արդիւնք են զիս, ցոփ և անբարոյական կենցաղավարութեան. տգիտութեան և երիտասարդական կիրքերու հարազատ ծընուող են երկու ախտերն ալ: Ո՞վ պիտի փրկէ երիտասարդութիւնը, — Հայ բժիշկը, Հայ քարոզիչը — Ուր են Հաստիփոր Հայ բժիշկները. մեր մէջ քարոզիչը այնքան տգէտ է այս ճիւղերուն մէջ, և այնքան ալ ծոյլ ու անտարբեր է որ ամեն բան կը ծանրանայ բժշկին վրայ. ուր են

այն բժիշկները որոնք երկար ժամանակ խոշոր շարաթականներ առնելու հասարակութեան պատմելու համար. ուր են ազգասէր հոշակող բժիշկները. իրենց աչքին առջև, իրենց շուրջը, պանդուխտ երիտասարդութիւնը վիճերու մէջ գահավիժելու վրայ է. այնքան հաւկոյր են որ այս թշուառներն չեն տեսներ. այնքան անսիրտ են որ գէթ գիտութեան, ոչ թէ պարտականութեան, զգացումը չը թելադրեր զիրենք խօսելու, խրատելու, համոզելու երիտասարդութիւնը, և սորվեցնելու անոր, որ առողջաւէտ կեանք մը վարէ:

Ուր են քարոզիչները. ասոնք երբ պիտի հասկնան թէ այս երկրին մէջ երկնքի քարոզներուն չափ երիտասարդութիւնը պէտք ունի աշխարհային քարոզներու. բոլոր երկրներն ալ շահի երիտասարդ մը, երջանիկ չէ երբ անձը կորսնցուցած է:

Թշուառ է երիտասարդութեան վիճակը, աւելի թշուառ է պարտազանցներու վիճակը: Թ. Չ.


ՆԱՇՈՒՆԻ ԴԵՐԱՍՍԱՆՆԵՐԸ Ի ՊՕՄԻՈՆ

Անցեալ Շաբաթ օր Նաշուէի դերասանական խումբը Պիճի Թփէրա Հաւրի մէջ ներկայացուց Վահէի ողբերգութիւնը: Հայ Հանդիսականներն չենքին դուրս դուրս ելած միջոցին իրարու կ'ըսէին «մեր դրամով մեզ խայտառակ ըրինք»:

Իրօք ալ այդպէս էր. դերասանները ոչ միայն իրենց դերի մէջ խակ էին, այլ նոյն իսկ Հայերէնն մոռցած էին կամ չէին գիտեր: Չիւրադրականները կըսէր ինքզինքը «մեր դրամով մեզ խայտառակ ըրինք»:

Շաբաթներ առաջ շատեր խրատեցին խմբապետը թէ Պօսթնի մէջ թատրոն վարձել և ներկայացում մը տալ շատ սուղի կը նստի, և խումբը կը կորսնցունէ. խմբապետի միակ պատասխանն էր «մենք ամեն պատրաստութիւն տեսած ենք և խումբը անպատուութիւն կը համարի հրաժարիլ իր գիտաւորութեանէն»: Սակայն այժմ այդ անպատուութիւնը աւելի ծանր է: Պօսթնի Հայերն իրենց բարեկամ Ամերիկացիներու առջև կորագլուխ եղած են Աղամեանի և նմաններու համբաւն նսեմացած տեսնելով, և խումբն ալ 40 տոլարի կորուստ մը ունեցաւ: ԱՇՈՏ

Ն Ա Ւ Ա Յ Ի Ն Լ ՈՒ Ի Ե Ր
Այսօր գալիք
Գամբանիայ — — — — — Լիվրուլէն
Վաղը գալիք
Լա Գամբանիայ — — — — — Հավրէն



ՀԱՐԱՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ
 Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,
 ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
 Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.
 ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՍՏԵԱՆ ԵՄԱՆՆԵՐՈՍ ԵՒ ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
 ԲԱՆԱՏԱՑԻ ՀԱՄԱՐ — ՀԱՄԱՐ
 ՏԻ. ՍԹ. Տարեկան 10 Փրանք.
 Տարեկան 1. 50
 Վեցամսեայ 75 Բաժանորդագիրն ԿԱՆՆԻԿ
 Եռամսեայ 40 վճարելի է միշտ:

Ծրար կամ նամակ ուղղել Հնտեւեալ Հասցէին՝
 To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City
 Entered at the Post Office at New York as Second Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԿ, ՀԱՐԱՐ, ՄԱՐՏ 19 1898.

Ն Ս Գ Բ Ի Ս

ԱՌԵՏՈՒՐ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ
 ՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԻՆՆ ԸՆԵՆՈՒ ԵՒ ԱՆ-
 ԿԱՆ ՍԱԿԱՅ, զորս հարկ կը
 համարենք յիշել հոս: — Երբ Հրեայն ոտք կը դնէ այս հո-
 դերու վրայ բոկոտն ու լքեալ, կը գտնէ իր շուրջ կրօնա-
 կան ու ընկերական կողմակիցութիւններ, փորձառու գոր-
 ծի մարդիկ, և որ աւելին է զարգացեալ մամուլ մը, որ
 ուղեցոյց կ'ըլլայ այսօրինակ պարագաներու մէջ յուսալատ
 նորեկին: Բարեգործական հաստատութիւններն կը հոգան
 ու կը խնամեն զայն, և կ'ըսեն անոր ականջին «գործ մը
 բռէ՞»։ Մամուլը նոյնը կ'ըսէ. վաճառականը նոյնը կը կրկ-
 նէ. Բարբին մի և նոյնը կը քարոզէ Սինակոլային մէջ: Բայց
 որպէս շատեր կը կարծեն՝ Հրեայներն նորեկի մը դրամա-
 գրութիւն ալ հայթայթող ընկերութիւններ չունին հոս: Իսրա-
 յեացիք իրենց աղքատն, նորեկն ու անգործը կը խնամեն,
 բայց ոչ զոր դրամագրութիւն կուտան գործ ընելու համար:
 Անոնց տուած ամենէն մեծ դրամագրութիւն բարոյական անկ-
 ցութիւնն ու ուղեցոյց ըլլան է. մնացեալը մեր չի հաւ-
 նած Հրեայն ինքը կ'ընէ:

Բայց Հայ գաղթականը երբ Ամերիկայ կը հասնի, մեր
 փորձառու(?) դասակարգէն տարբեր խրատ մը կ'ստանայ:
 «Տղաս, զնա գործարանի մը մէջ գործ մը գտիր, և փարա
 աւելցուր որ մարդ ըլլաս»: Այս է եղբր մեր խրատն ու
 խորհուրդն ամեն նորեկին. լինի նա պատանի մը, մանուկ
 մը կամ տարիքն առած մէկը:

Մեր ազգային—կրօնական հաստատութեանց ու քա-
 ռոզող կրօնականներու վրայ աւելորդ է խօսիլ: Մենք մե-
 րիններն շատ մտնէն կը ճանչնանք արդէն: Բարեգործա-
 կան ընկերութիւնն ու Հայ մամուլը չենք կրնար մասնա-
 նիչ ընել, զի գիտենք անոնց զօրութիւնն: Հայ գաղթա-
 կանն եթէ ինքն չի փնտռէ գտանք, վերջիններս նորեկի
 մը ետեւէ պատելու ոչ գիւրութիւնն ունին և ոչ զօրու-
 թիւնը. և ուստի մեր նորեկը ստիպուած է մայիկ ընել իր
 մէկ քանի փորձառու(?) Հայրենակիցներու խրատին, և կա-
 մաւ ինչպէս կամաւոր Գերութեան մը լուծին սակ, ուր
 տարիներէ ի վեր շարժարուող Հայ գործաւորաց 100է մին
 դեռ իր ժամանակին ու կամքին տէրը չէ կրցած ըլլալ:
 Գործաւորը, մանաւանդ Հայ գործաւորը, որ վարժ չէ
 այդ փակուած կեանքին, գործարանի մթնոլորտին մէջ ոչ
 միայն կը սովորանայ ֆիզիքապէս, այլ և բարոյապէս կ'ըլ-
 նայ ու կ'անդադայանայ օրէ օր: Գործաւոր մը միշտ դժգոհ
 է. այդ բանասերեալ ու միօրինակ կեանքը իրեն մէջ—կա-
 մաց կամաց— կը թմրեցնէ ամեն հոգեկան կարողութիւն-
 ներ: Ազգ, կրօնք, Հայրենիք, կեանք և այլ ամեն ինչ ի-
 րեն համար կը դադրին օր մը հաճոյք ու նշանակութիւն
 ունենալէ: Եւ այս է պատճառն որ ամեն քաղաքակրթեալ
 երկիրներու մէջ այս կեանքի ենթակրթեալ դասակարգն է որ
 շարագործներ կ'արտադրէ ընդհանրապէս: Եւ ստուք ըն-
 կերական այս յոգի գրութեան անմեղ զոհերն են միայն:

Մեր նպատակը ընկերական դրութիւնն քննադատել
 չէ այս տեղ, այլ մեր փափաքն է մեր Հայրենակիցներն
 այս ստակալի դրութեանէն փրկելու և զգուշացնելու համար
 թեկադրութիւններ ընել ու միջոցներ ցոյց տալ, զի վստահ
 ենք թէ այս կեանքը կրնայ մեզ համար ազգային մի նոր
 ողջութեամբ մտնիկ պպազայի մէջ:

Ըսելու է թէ մենք գործաւորութիւն բառը իր ընդար-
 ձակ նշանակութեամբ չէ որ կը գործածենք հոս. զայն պի-
 տի վերագրենք այն կարգի աշխատութեանց, որոց ենթար-
 կուող գործաւորներու մի քանի հարիւրը, չէնք մը մէջ
 փակուած, օրական տասը ժամ կ'աշխատին ֆիզիքապէս՝
 չօգրի զօրութեան հետ մէկտեղ՝ որոշեալ շարաթականի մը
 փոխարէն:

Մենք գլխովին հակառակ ենք Հայ գաղթականութեան
 Ամերիկայ գալուստն. հակառակ ենք և եղած ենք երկար տարի-
 ներէ ի վեր գաղթականութեան գաղափարին, որոյ վրայ
 ունինք գրեւ առանձին յօդուածով: Բայց քանի որ գաղ-
 թականութիւնն եկած է, և հոս է, Մամուլ, ինչպէս նաև
 խորհող ու փորձառու դասակարգի պարտականութիւնն է
 ձայն բարձրացնել գործաւորական ներկայ դրութեան դէմ,
 որոյ մատնուած է Հայ գաղութը, և թելադրել անոր ու-
 րիշ ճամբայ մը, որով կարողանայ անկախ մարդ լաւալ
 սակէ վերջ:

Ազգասիրութեան առաջին քայլը, այս պարագաներու
 տակ, Հայ գործաւորը լաւ վիճակի մը մէջ դնել է:
 Գաղթականութիւնն ինքնին կոտորած մ'է արդէն Մայր
 երկրի համար. իսկ գաղթականութեան ծաղիկ դասակար-
 գին գործարանաց մէջ այսպէս փտախի՛ն երկրորդ և աւելի
 ստակալի կոտորած մ'է ինքնին:

Կարծիք մը կայ թէ Հայ գործաւորը եթէ յաջողի հոս
 ազատ դիրք մը բռնել ու զարգանալ, անոր վերագործը
 անկարելի կը դառնայ, հետեւաբար լաւագոյն կը սեպեն
 զայն նոյն վիճակին մատնուած, քան ազատուած տեսնել,
 որպէս զի օրին մէկը ստիպուի Հայրենիք վերագառնալ:
 Այս սեպակ մը ծայրահեղ ազգասիրութիւնն է—եթէ ներ-
 լի է այդպէս անուանել— որուն մենք չենք հաւատար կը
 բռնէ: Նախ՝ այն Հայը որ գործարանի մէջ կ'աշխատէ, մաշած
 ու փնտրուած՝ Հայրենիք կ'երթայ ՍՏԻՊԵԱՆ, ազգին հա-
 մար ոչինչ օգուտ ունի՝ փնտռէ զատ: Անոնց հոս զարգա-
 նալը ու հոս մնալը անհամեմատ օգտակար է ազգին: Հա-
 յաստան գերեզմաններու պէտք չունի: Գաղաքներն արդէն
 գերեզման դարձած են հիմայ:

Ոմանք կը կարծեն թէ Հայը հոս այլևայլ գործերու
 մէջ եթէ յաջողութիւն գտնեն ու դիրք մը բռնեն շու-
 կայի վրայ, քաջալեր պիտի ըլլան բոլոր Հայոց՝ Ամերիկայ
 գաղթելու համար: Ճշմարտութիւն մը եղած պիտի ըլլար
 այս, եթէ առևտուրի մէջ յաջողիլը, գործարանի մը կամա-
 րու գերութիւնն ձեռք ձգելու շահ գիւրին ըլլար հոս:
 Գործարաններն, որոց դռները բաց են նորանոր գորութիւն-
 ներն մաշելու համար, ոչ միայն հրապայր եղած են Հա-
 յուն հոս վազել, այլ և պատճառ եղած են անոր անկման
 ու այժմեան կեանքին: Եթէ գործարանը անձանթ մնար
 մեզ, մեր գաղթականութիւնն շատ նուազ պիտի ըլլար
 հոս, և այն ալ անկախ գործերով զբաղեալ. և հետեւաբար
 գործի յարմարութիւն չունեցող ստիպեալ պիտի վերա-
 դառնար՝ ուրիշներուն օրինակ ըլլալու համար: Եւ սա-
 կայի րնա մտնալու չէ սա կարևոր կէտն թէ իր ժամա-
 նակի տէր մէկը աւելի առիթ ունի տուն վերադառնալու
 վրայ խորհիլ և օրին մէկը գործադրել զայն, քան այն
 սարաքաղճը, որուն միտքը շոգիին կ'ապուած՝ մեքենաբար
 անոր հետ պիտի քայլէ՝ առանց ուրիշ բան մը մտածելու:
 Իսկ երկիրներն...: Հարկ չէ երկարել: Յազանք գործաւոր-
 անի համար օրուան լաւագոյն ժամերը ապարդիւն կ'եր-
 թան, իսկ գիշերներն՝ քնոյ և հանգստութեան...:

ԿԻՒՐԵՂ ՍԱՐԿԱՒԱԳ

Բիւզանդիոնէ մեր անցեալ շարժու արտասպաճ այն
 լուր թէ Կիւրեղ Սարկաւազ Խաչատրեան, յանուն Ամերի-
 կայի Հայ գաղթականութեան վեհ. Հայրապետին ներկայա-
 ցեալ ու արժանաւոր հովիւ մը խնդրել է մեզ համար, շատ
 զարմանք պատճառեց հոս, վասն զի ամեն ոք գիտէր թէ
 Սարկաւազին ո՛ր է պաշտօն մը տրուած չէր այդ մասին՝
 իր մեկնած ժամանակ. թէ և նիւ Եօքթի և շրջակայից հա-
 մար եկեղեցական մը բերել տալու խնդրի մը կար այդ
 օրեր և կայ տակաւին:

Սարկաւազ Խաչատրեան երբ կը պատրաստուէր մեկնիլ՝
 գիտում եղաւ նախկին Հոգաբարձութեան Ատենապետին,
 ճանապարհի ծախուց համար: Այս վերջինն՝ առանց ժողով
 իսկ կրնալ գումարելու, հրաման ըրաւ անդամի մը որ 50
 տուրքի շահ վճարէ այս մասին: Այդ գումար գանձուե-
 լէ անմիջապէս վերջ Սարկաւազը մեկնեցաւ: Հոգաբար-
 ձութիւնն պաշտօնապէս անոր ճամբորդութեան լուր ստաւ
 քանի մը շարաթներէ վերջ միայն, երբ վճարուած դրամը
 խնդրոյ առարկայ դարձաւ. այսպէս ալ ուրիշ քաղաքնե-
 րու Հոգաբարձուք ոչինչ լուր ունէին Սարկաւազի ճամ-
 բորդութեան մասին:

Մեզ կը թուի թէ Բիւզանդիոնի Հրատարակած այս
 լուր թիւրմացութեան արդիւնք է: Թեքա Խաչատրեան
 Սարկաւազ, ինչպէս որ խոստացած էր, անպաշտօն կերպիւ
 ն. Օժուրեան ուշադրութիւնն հրաւիրած է քաղաքիս ու
 շրջակայից Հայոց անկերպարան վիճակին վրայ, և այս լուր
 Պօլիս հասած է բոլորովին տարբեր գոյնի տակ:

ԱԶԳ

Բաղադրեալ Հայկազան Կաճառը, որ վերջերս ստիպուե-
 լան հեռանալ Ս: Բարթողիմէոսի շէնքէն, ջերմ փափաք
 ունի շարունակելու իւր այս օգտակար կազմակերպութիւ-
 նը՝ տարբեր շէնքի մը մէջ:

Այս ազգով կը հրաւիրենք Կաճառի բոլոր անդամները
 և ամեն Հայ որ ներկայ գտնուին 220 Իսթ. 23րդ փողոցի
 եկեղեցին այս Շաբաթ երեկոյ, Մարտ 19, ժամը 8:30
 7 1/2 ին, ուր տեղ պիտի կարգադրուին Կաճառին համար շատ
 կարևոր խնդիրներ: Այս առթիւ պիտի խօսին Տիարք Չիլի-
 ճեան, Վահէ Գրիգորեան, Հ. Արզումանեան և Թ. Զար-
 շաֆեան: Ամեն Հայ է կը խնդրուի ներկայ գտնուիլ:
 Ի Դիմաց Յանձնախումբին Ե. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ

Ո Ր Բ Ե Ր Ո Ւ Ս Ի Ի Ն Ա Կ Ը

Մարտ 14, Ուսթըր.

Շնորհակալութեամբ ստացայ Ֆր-
 րանքիինի(Մէս) Թրաքիինի Փարք զըտ-
 նուած Բէսրիկից Հայոց տունէն՝ 'ի-
 նպատտ Որոց 14 տողար: Նոյնպէս
 էքսպրիքի(Մէս) շէքլա Միլ գանուող
 Հայոց տունէն՝ 6 տողար, և Միլլաբիի
 3 Հայերէն 5 1/2 տողար: Գաղաքներէ
 են օրինակները. կ'սպասենք ուրիշ
 տեղերէ ալ: Մինչև ցարդ որբերուն
 համար խնայուած գումարն է չորս
 հարիւր իննսուն վեց տողար:

Կ. Պօլսոյ Ամեն. Ս. Պատրիար-
 քէն պաշտօնական օրհնութեան նա-
 մակ մը եկաւ համարաւոր Հայասէր
 Օր. Ալիս Սթօն Պէքուէլի, ներս ի-
 նպատտ որոց տարած խնամքներուն
 տարեկանը զրկած է նոյն որբանոցի
 հոգաբարձութեան՝ խնդրելով որ որ-
 դեգրին անուր, տարիքը, լու-
 սանկարը և այլն՝ մեզ զրկուի: Ահա՛
 այս ձևով կ'ոկուի եօթնեակներու գոր-
 ծունէութիւնը՝ առաջին տարուանը
 կանխիկ:

ՄԱՇԹՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ

Արթ. Տ. Վաղինակ Վարդապետ
 կը տեղեկացնէ մեզ թէ ի նպատտ
 որոց հանգանակութիւնը կը շա-
 րունակուի. Փրովիտէնէ գոյացած է
 ցարդ \$578. 85: Մէնթրըլ Ֆօլքս \$105,
 և Վանաքէթէ \$25.50, մասնոր եօթ-
 նեակէ մը:

Փրովիտէնի որբանոց ընկեր-
 ութիւնը կ'աշխատի իւր հանգանա-
 կութիւնը արդիւնաւոր ընելու:

ԹՂԱԿՑՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԻՍԻ

Մարտ 13, Պօսթօն.

Պօսթիինի գանազան Հայ կազմա-
 կերպութեանց մէջ Բարեկարգ Ընկե-
 րութիւնն է միայն որ իրեն անդամ
 կ'ընդունի հայասէր օտարազ-
 գիներ: Շնորհիւ իր կանոնադրի սոյն
 արամադրութեան, Բարեկարգը Հա-
 յոց և Ամերիկացոց միջև կարևոր և
 օգտակար միջնորդ մը դարձած է՝
 փոխադարձ ծանօթութեան և համակ-
 րութեան:

Ընկերութիւնս իր ծագումէն ի-
 վեր միշտ ունեցած է եւրոպական դժ-
 ուարութիւններ, և մինչև քանի մ'օր
 առաջ 120 տողարի պարտք մը կը ծան-
 րանար իր վրայ: Այն պարտքը ջըն-
 ջելու և Ընկերութիւնը Ամերիկացոց
 լաւ ծանօթացնելու կրիին նպատակ-
 ներով՝ քանի մը շարաթ առաջ Տիար
 Օ. Հ. Աթէշեանի ազնիւ Տիկ-
 նոջ նախաձեռնութեամբ կազմակեր-
 պուեցաւ նուագահանգէս մը, որուն
 մարդասիրարար մասնակցեցան Պօս-
 ղոնի ծանօթ և կարող տաղանդներէն
 ոմանք, առանց ո՛ր է վարձատրու-
 թեան:

Արուեստի փափկութեան և ճա-
 կարի նրբութեան մասին նշանաւոր
 այս նուագահանգէսին ներկայ էին,
 Հայերէն գառ, երկու հարիւրի չափ
 Ամերիկացիներ, որոց շատ հակիրճ
 ուղերձով մը պարզեց Տիար Աթէշ-
 եան՝ Ընկերութեան նպատակը և գոր-
 ծունէութիւնը:

Բարոյական այս փայլուն յաջո-
 ղութեանէն ետքը, մեզ հետաքրքրո-
 ղը նիւթական արդիւնքն էր, որուն
 անձկանօք կ'սպասէր Գանձապետը:
 Վարչական ժողովը վերջին նստին
 մէջ Տիկն Աթէշեան, տիպար Հա-
 մեստութեամբ մը՝ ներկայացուց 300
 տողար չէք մը իրբն գումար հասոյթ
 նուագահանգիսին՝ ինքն իր կողմէ

աւելցնելով ինչ որ կը պահուէր հասարակ յիշեալ կողմ թուոյն հասցնելու:

Գրանձապետը՝ Տաճկաստան քանիցս այցելած՝ հայաստան օրինորդ Պօրտըն, այդ շէքը ի ձեռնին բացագանչեց — Ընկերութեան կազմակերպութեան ի վեր երբէք այսչափ երջանիկ զգացած չէի: Պօրտընի ամբողջ Հայութիւնը գոհ մնաց հանդիսին բարոյական և նիւթական յարողութեանէն. և ասարակոյ շունչով թէ սրտագին երաստապարտ կ'զգայ զայն նախաձեռնող բարեխէր և ազնիւ տիկնոջ:

Կ. Յ. ՓԱՓԱՋԵԱՆ

Մարտ 12, Ուէսթ Զօպօքըն.

Պատար մ'առնել անցեալ կիրակի Ուէսթ Զօպօքըն այցելելով, կը ինքսմ գէթ փոքրիկ գաղափար մը ունէր տեղոյն Հայ երիտասարդութեան գործունէութեան վրայ:

Ուէսթ Զօպօքընի Հայ երիտասարդութեանը ունի երկու ընկերութիւններ—եթէ չէք ուզեր կուսակցութիւններ կոչել: Առաջինն է «Կըրթասիրական» անունով ընկերութիւն մը, որ իր գոյութեան առաջնութեամբ կը պարծի երկրորդէն, այն է «Ուսու միասիրաց» անուն ընկերութեանէն: Այս վերջինն հազիւ 2 ամսէ ի վեր կազմուած է երիտասարդ Հայ Տօբթէօրի մը նախագահութեամբ, որ Ուէսթ Զօպօքընի Հայ գաղութի վկայեալ բժիշկին է և միևնոյն ժամանակ Ազգ. ուսուցիչն՝ Հայ երիտասարդաց, որոնց կը դասախօսէ շարքեր չորս գիշերներ, փոխարինութիւն մը ստանալով Երիցական Եկեղեցիէ մը:

Բարեբաղդաբար երկու ընկերութեանց գումարումներուն ալ ներկայ գտնուելու հաճոյքն վայելցիլ. բայց երկու ժողովներու մէջ ալ Հ'կրոյայ գրակը գարմացումս, որով համակուած մնացի իտեւ ներկայ այն ցանցաւ ժողովականներուն, որոնք շատ չնչին թիւ մը կը ներկայացնէին՝ բաղդատամար Ուէսթ Զօպօքընի Հայ բարձրամարդ գաղթականութեան, հազիւ 12-13 դէմքեր տեսայ այդ գումարումներուն մէջ: Երբ Ուէսթ Զօպօքընի Հայ գաղութը մ'օտարարայէս 4-500 անձի բնակութիւն մը կը ներկայացնէ, և որոնց 100է աւելին երիտասարդ հոշուելով, այդ ժողովին մէջ միայն 13 դէմքեր կը նըշմարուին, զիւրին է մտաբերել թէ մնացած երիտասարդութիւնը իր ժամերն ինչո՞վ կ'անցունէ:

Առջինի, «Կըրթասիրական» ընկերութեան տեղեակ էի: 3 ամիս առաջ կիրակէ օր մը, պատահաբար անոր մէկ գումարումին ներկայ գտնուած էի, ուր բաւական խուս՝ ամբոյ մը գտած էի. մտածեցի թէ՛ հիմայ ընկերութիւնն, որ 6 ամսուան կեանք մ'ունի, անշուշտ իր անդամակիցներու թիւն աւելցուցած է. քանի որ կը շարունակուի. բայց յուսախաբութիւն տեսայ: Իրաց այս անախորժ երեսլիկին նկատմամբ՝ իմ մէջ ծնած գարմացումս բացարձակապէս յայտնեցի ընկ. Ատենակետին (Կ. Գ. Պ.), որ փութաց իր գիտակցութեան համեմատ բացարձակ այս տխուր երեսլիկին գաղտնիքը, ցոյց տալով այն տեսանկի պատճառներն, որոնք նըշաղցուցած էին անդամոց թիւը:

Յայտնուած պատճառներուն մէջ սա կէտն գիտեցի, այսինքն հրաժարում անդամներէն մէկ քանիներուն ունեցած անձնական հակառակութիւններն՝ ընդգէմ մնացածներու և ընկ. պաշտօնէից մի քանիին կամ ամբողջին դէմ:

Բայց Տիար Ատենակետն ըստ թէ այս վերջին արգելն հարթուած համարուեալ է, որովհետև 6 ամսեայ շրջանն լրանալուն համար նոր

ընտրութիւն պիտի կատարուի, այն ատեն երիտասարդութիւնը կրնայ ընտրել իւր սիրելի գիւնը:

Այս ազատ երկրի բարքերն ոչինչ ազդած են Ուէսթ Զօպօքընի Հայ երիտասարդութեան վրայ. որ Ազգ. գործոց մէջ գեռ չը խղճար խառնել անձնական դժու ճ հաշիւները. միայն այն ետամով նշանարանին կը հետևի, որ է «թէք խօսքս ընեմ»: Ինչո՞ւ չի հետևել կարգ մը ուրիշ հայարնակ քաղաքներու օրինակին: Ինչո՞ւ չ'միանալ մէկ անունի տակ, միայնել բաժանեալ ոյժերն մէկ նպատակի համար և այս կերպով օրինակ հանդիսանալ միջավայրին մէջ գտնուող միւս երիտասարդաց, և մասնաւոր քանի որ երկու ընկերութեան կանոնգրի նպատակներն ալ նոյն են ինչպէս և անուններն ալ համանիշ:

Երիտասարդներ, լաւ մը կը ունեցէք մեր դիւրբի ծանրութիւնը: Մեր հոս գաղթիւր նպատակը «կտոր մը հաց» ճարել չէ: Պարտքի ահազին բեռն մը տակ կ'ընկնուինք: Մայր Հայաստանի ապագայն մեզմէ կախում ունի: Ըրէք այնպէս որ փոխանակ ապագայ սերունդի անէծքներուն՝ անոր դարնի պսակներուն արժանանանք: ԱՅՑԵՆՈՒ ՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՈՒՌԸ

Յունվ. 12, Բաքալերի, Մաս. Հեռու անցեալի մը մէջէն կը յիշեմ աստեղազարդ գեղեցիկ գիշեր մը այն երջանիկ օրերէն, երբ Հայ մայրը օրօրային քով նստած էր մանուկը կը քնացնէր ազատութեան մեղմօրօք երգերով, և Հայ օրինորդը՝ բունուրի անգութ ձեռքէն հեռի՝ ապագայ մ'օր մը բոլոր նուիրական պարտականութիւնները կը շինէր իր մէջ՝ Հայաստանի արժան գաւակներ պատրաստելու համար:

Ամանային տօղազին գիշեր մըն էր այն յարբերքի մէջ. կուսինկան իր յորդառատ ճառագայթներով կը լուսաւորէր աստիճանու վրայ տարածուած ցանցի բազմութիւն մը: Խուս՝ մը երիտասարդներ անկողնի մէջ շուրջ բոլորուած տաք խօսակցութեան մէջ թաղուեալ էին. անդին խուս՝ մը դպրոցական աշակերտներ անկիւն մը հաւաքուած՝ իրենց յերկուան դասերուն վրայ կը վիճաբանէին: Բիշ մը հեռուն՝ ուրիշ խուս՝ մը տղաքներ բոլորակ մը կազմած, պառաւի մէջ հէքեան մ'տիկ կ'ընէին. իսկ աւելի հեռուն ուրիշ գումարթ խուս՝ մը դպրոցական աշակերտ, պար բռնած քաղցրաձայն երգ մը կը երգէին ու կը դառնային լուսնի պայծառ լյսին տակ:

Նպատակաւ չէ նկարագրել անցեալ այն երանաւետ օրերը, որունք անցած գացած են, իրենց ետև թողելով միայն արտասուք՝ երգի տեղ. աղքատանոց՝ դպրոցի տեղ, և ուխարխուլ պատեր՝ տանիքի տեղ, չոր փոխաժ մը՝ անկողնի տեղ և արհաւիրքի պտոյտ մը՝ կամուռան գիշերներուն այն անհոգ պարբերուն տեղ: Անցեալի այդ տխուր յիշատակները մէկգիթ թողելով՝ կ'ուզեմ հոս յիշել խօսակցութիւն մը, զոր ունեցանք Հայ երիտասարդի մը հետ Ամանուան այն պայծառ գիշերուան միջոցին, տանիքի մը անկողնոյն վրայ ընկողմացած:

Հայաստանի փայլուն սպազայն՝ այդ գիշեր մեր դիմաց ժպտող Լուսնի չափ՝ ստոյգ և մ'օտարութեան լով մեզ, անոյշ խօսակցութեան մը մէջ խորասուզուած էինք:

Յանկարծ կենսական հարցում մը ծնաւ մեր մէջ. արդեօք ունի՞նք մեր մէջ կարող մարդիկ Հայաստանը քաղաքակրթեալ երկիր մը դարձնելու, եթէ քիչ ատենէն ազատ հոշակուի

թուրքի իշխանութեանէն: Շատ մը թեր ու դէմ կարծիքներէ վերջ այս եղաւ ընկերիս հաստատ համոզումը թէ երբ հնչէ այդ ցնծալի ժամը՝ արտասահմանի գոյր Հայերը ներս պիտի խուժեն իրենց հետ բերելով Ամերիկայի ու Եւրոպայի քաղաքակրթութեան բոլոր միջոցները: Ոմանք շոգիի հրաշալի գործութեամբ Հայաստանի տկարացած երակները պիտի վերակենդանացնեն. ոմանք երկրագործութեան կատարելագործեալ գործիքներով Հայաստանի ամայացած արտերը դրախտի պիտի փոխեն, ոմանք արհեստի և գիտութեան բարձրացոյն դպրոցներ պիտի հիմեն. իսկ ոմանք զինուորական կազմակերպութիւնը պիտի մացնեն քաջագուն Հայ երիտասարդաց մէջ:

Ինչ խաբուսիկ երագ մ'է այս. մինչ ցուրդ իրականութիւնը կը կանգնի այսօր մեր առջև: Ո՞վ պիտի վերականգնէ անկեալ Հայաստանը, երբ ազատութեան զանգակը հնչէ: (Շարունակելի) Կ. Գ. ԱՆՍՏԱՆ

ԻՄ ԵՐԿԻՆԵՐՍ

Իմ երկինքս այն չէ ուր ցորեկն արև Գիշերներն աստեղք փայլին ի վերև, Ուր սաէպ տխուր ամչկոտ լուսին կերևի գունատ, հանգոյն հայ կուսին: Իմ երկինքս այն չէ ուր երբեմն ամպեր, Որոտ անպատկառ, կայծակ ու շանթեր կը տեղակարկուտ, անձրև ու հեղեղ, Ձիւն ու բուք, սաէպ մորիկ հանգ:

Իմ երկինքս այն չէ ուր ինք Եհովան, Ծիրանին դրաւ հաշտութեան նշան. Իմ երկինքս այն չէ լոկ ուր մահէ վերջ, Մարդս կ'փնտռէ կեանք անմահ անվերջ

Իմ երկինքս այն է ուր գոյք մ'արևներ կը փայլին ցորեկ, երբեմն գիշերներ. Անկէ կը բոլորին շերտութիւն ու լյս, կեանք թմրած սրտիս՝ յոյս լքեալ հոգոյս

Իմ երկինքս այն է. հոն շկան ամպեր, Ձկան ձիւն ու բուք, կայծակ ու շանթեր Հոն չէ տեսնուած բնու փոթորիկ, Այլ ծիծաղ գուարթ, ժպիտ գեղեցիկ:

Իմ երկինքս այն է. հոն շկայ ձմեռ, Ոչ կիզիչ ամառ, աշնան տերևներ. Իմ երկինքս հոն է, ուր գոյք մը անփուշ Երկնային վարդեր կը բուրեն անուշ:

Իմ երկինքս այն է. հոն ինքն Արարիչ Երկու մահկանաւ սեռի գրաւիչ Գոտիներ կանգնեց ծիրանոյն նման Որ իմ գարդարեն երկինքս անմահս:

Բայց բոլոր աշխարհ արձակ համարձակ Ձիւրդիակ երկին, աստղեր ու լուսնակ, Բայց իմ երկինքս մարդոյ վատ ձեռքեր Պահեցին ինչ բազմամաց ի վեր:

Թող որ ուրիշներ աղօթքներ ընեն, Աստուծո՞ւմ գրած ու ոսկի խնդրեն. Բայց ես կազաղմ որ Տէրն իր անթիւ Գթութեամբն ինձ տայ երկինքս Ե. Ե. 1896 իմ ազնիւ:

ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

ԻՄ ՍԻՐԱՄՍ

Տգէտ էի ես ոչ՝ այն ժամանակ, Երբ անկեղծ սրտով զբեզ սիրեցի. Համեստութիւնով նախապաշարուած Տուած նուէրներդ Մովը ձգեցի:

Ապանդխտութեան ցուպն առնելով, Միրոյդ կայծ սրտէս մ'արկ կեղծեցի նախապաշարեալ մեղքի մը նման, Ինչպէս անմատուի դարման կարծեցի:

Քանի պանդխտեան օրեր երկնցան, Միրոս սկսաւ սիրոյդ ծառայել. Ինչի մ'օտեցայ ես գիտակցութեան, Գու կուռք մ'եղար ինձ սկսայ պաշտել: ՋՈՋԻԿ

ԱՉԴ

Սիւնն Պոյաճեան Այսաքա երթալու նպատակ ունենալով՝ իր նպարագանալի խանութը վաճառել կ'ուզէ յարմար գնով մը: Դիմել թիւ 231 Իսթ, 28րդ փողոց:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Կ. Գ. Նիւ Եօրք—Ձեր նամակը Բարեգործական Ընկերութեան Ընկերութեան ղրկած ենք, զայն հրատարակելու ժամանակն անցած էր:

Տ. Գ. Թ.—Ձեր ստանալու որը առած ենք. Ձեր փափաքը չի պիտի կրնանք կատարել: Մի՛ յուսահատիք արձակ գրել փորձեցէք նախ:

* Մանուցու մեկն ձրի չենք կրնար տպել. երկու մասնաշափ տեղին համար 50 սէնթ վճարելու են ծանուցում ընել ուղղոյն: Վճարումը կանխել է:

—Մայրիկ, այս երկրի թռչուններն անգամ ազատ են:

—Ինչէն գիտացար, դուստր:

—Վասն զի իրենց բոյները կանանց գլխարկներու վրան անգամ կը շիւնեն: ՍՈՒՆՆ

Մ Ա Ն Ր Ա Լ ՈՒ Ր Ք

Վաղը Ս. Ոսկերբան եկեղեցիին մէջ Ս. Պատարագէն վերջ պիտի խօսի Տ. Գ. Ձիթճեան:

—Կիրակնօրեայ Ազատ Լսարանի մէջ, 57 Ուէսթ 28րդ փողոց, պիտի խօսին Տիարք Համբարձում Արզումանեանց, նիւթ ունենալով կողկասի Հայերը և անոնց գրականութիւն. իսկ Պ. Կ. Ձիթճեան՝ կրօնի բարոյականը:

—Ազատ Լսարանի Հիմնադրք Իրենց Թեոյն վրայ աւելցուցած են նաև Տիարք Զ. Մարկոսեան, Ս. Կարապետ, Վ. Հանիկեան և Կ. Երամեան:

—Ընթերցողք կը յիշեն թէ Տիկին մը ասեղնագործեր վիճակահանութեան դրած էր վերջերս՝ եկամուտի 100ին 25ը Բարեգործական Ընկերութեան տրուելու պայմանաւ: Այդ վիճակահանութիւն կատարուցու անցելներն, ու հետեւեալ թիւերն շահեցան.—206, 34, 7, 157, 100, 218, 129, 52, 120, 54, 125, 81, 144, 145, 76, 163, 1, և 58:

—Հայ Ե. Թ. Մ. երկու շաբաթէ վերջ հրատարակային մեծ հանդէս մը պիտի տայ Գրամբուի Լայսիմի մէջ:

—Յիշուրի մէջ անցեալ կիրակի օր ընդհանուր ժողով մը տեղի ունեցեր է տեղական ինչ ինչ գործեր կարգադրելու համար: Այս ժողովին մէջ խօսեր են Տիարք Սարգիսեան, Ռուրիկեան, Մանուշեան և Գափաղեան:

—Անցեալ կիրակի երկույ Պ. Ձիթճեան Հայոց Լսարանի մէջ խօսեցաւ Հայաստանեայց եկեղեցւոյ վրայ. բացատրեց անոր մի քանի ծէրերը, պահքը, ներողամտութեան և ազատականութեան ոգին. ցոյց տուաւ թէ ինչո՞ւ Հայ ազգը իր գոյութիւնն կը պարտի Հայաստանեայց եկեղեցոյն, և այս առթիւ ծանրացաւ անոնց վրայ, որք բաժնուած էին Մայրենի եկեղեցիէն, ուր կրնային գտնել ինչ որ կը յուսան փնտռել օտար եկեղեցիներու մէջ: Մատնանիչ ըրաւ այն դասակարգը, որ ոչ միայն Հայաստանեայց եկեղեցիէն բաժնուած էր, այլ և զայն ճանչնալն անպատուութիւն կը սեպէր իրեն՝ առանց դիտարկել թէ հրէն ու սրէն զինքն ազատողն եղած էր նա դարերէ ի վեր:

Տ. Ձիթճեան Հայ Բողոքական ծնած է և բաւական ժամանակ Բողոքական հայոց քարոզիչն եղեր է Ամերիկայի մէջ:

—Ազատ Լսարանը Ապրիլ 16ին մեծ հանդէս մը պիտի տայ ինպատու որերուն:

—Պիշի Գօթթըր՝ Գաղաքիս եպիսկոպոսն՝ Ե. Ե. Հէրլուտի հակա-Հայկական ընթացքն սուր կերպիւ քննադատեր ու զայն «ստախոս» անուաներ է:

—Տըթ. Չ. Բ. Թէնտորեանի ԲՅՈՂԱ
Ստալըթի օՖ Կուս Ֆէլճ ընկերու-

—Պատ. Ա. Մ. Իգնատիոսեան նոր
մէթոտով անդդիւրէն մարզանք մը

—Անցեաները Փաթըրընի մէջ
Տ. Յ. Բարսեղեան ամուսնացաւ Օր-

—Զէր վօն Արքամովիչ, Հոչու-

—Վերջին Լ'Արմէնի մէջ Փրօֆ. Մ.

—Փարիզի ազգայիններէն Տ. Իս-

—Յառաջիկայ Կիրակի Նիւ Եօրթի

—Յառաջիկայ Կիրակի Նիւ Եօրթի

Ն Ո Ր Ա Վ Է Պ
ՀԱՅ ՊԱՆՆԻՍՏԻ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻԾ

«ՊԻՏԻ ՉԳՂԱՍ»
(Շարունակութիւն)

Դու ինձ օրինակ մի տար Պարսա-
մին և միւսներին. նոքա դեռ մի քա-

Սեղծ Մայրը իզուր համոզեց եր-

տուն վերադարձաւ :

Հաճի Պէկ, տեղական անխիղճ
վաշխառուներէն մին էր, և Ամերի-

—Ողջ ըլլաւ, Հաճի Պէկ, եթէ

—Ոչինչ մի վստահ Տիկին, լաւ

Նուրիսանը լսեց, իսկ Արուժ

Արուժ շնորհակալութեամբ հան-

Նոքա գնացին, իսկ խեղճ Նուրի-

—Ուրեմն թող վկայէ վարժապե-

Նուրիսանը գրեւ շէր գիտէր, բայց

Հաճի Պէկ դուրս քաշելով ծոցի


Արուժ շնորհակալութիւն յայտ-

(Շարունակելի) ԱՔՔԱՅ-ԿԱՍԻՆԱՅ



«Կե՛ր ինչ որ կը սիրես», բայց հա-
զիր ինչ որ ուրիշները կը սիրեն :

Առ
Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ
Թիւ 628 Յրդ. ԱՎՂՆԻԻ, ՆԻՒ ԵՕՐԲ



ՅԱԿՈԲ Խ. ԽԵՐԳԵԿԵԱՆ.
(Ներկայացուցիչ)
ՈՒՒՆԻՆՍՏ Պ. ՔԵՕՂԸՐ ԵՒ
ԵՂՉԱՐՑ,
Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն, Բ
Կինի, Օդի, ոգի լի Ը՛մպիւնաց են.

Պատիւ ունի ծանուցանել արդոյ
հասարակութեան թէ իւր վաճառած

Մեր յաճախորդքը երբ չի հուսին

Գրեւ շէր գիտէր, բայց համոզեց

Հ Ի Ր Չ Օ Ղ Ա
ՄԱՉԻ ԴԵՂ

HIRSOLA. Կը գօրացնէ, կը
մաքրէ, կը փայլե-
ցունէ մազերը ու
թափելը կը դադ-
րեցնէ : Կը բուժէ
նաև մորթի հիւան-
դութիւնն ու կը
մաքրէ թեփերը :

Միանգամ փոր-
ձել բաւական է սա
դեղին արժէքը
զիտնալու համար,
որ արեւեկան խոտե-
րէ պատրաստուած
է յոյժ հաճելի մի
հոտով :


Վուզամ ծանուցանել թէ Ըսթամ-
Ֆըրտի մէջ խանութ մ'ունիմ, զոր
վաճառել կ'ուզեմ. սորա մէջ կան

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ
Ֆ. ՉԱՆՈՒՄ ԵՒ ՈՐԴԻԲ
Ն Ե Ր Ա Մ Ո Ղ Թ Ի Ք Ա Կ Ա Ն, Ա Պ Բ Ա Ն Ա Յ

Պատիւ ունիմ ծանուցանել ար-
դոյ Հայ հասարակութեան թէ վերու-

Միտա ատան գինը : Փորձեցէք :
ՉԱՆՈՒՄ ԵՒ ՈՐԴԻԲ
73, Ուաշինկթօն Փողոց.

Ա. Թ Օ Փ Ո Ւ Չ Ե Ա Ն
239 Իսթ, 26րդ Փողոց, Ն. Ե.
Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ճ Ա Ռ ԵՒ Կ Օ Շ Կ Ա Կ Ա Ր



Ամառուայ ամեն բնական կօշիկներ
(արանց, կանանց, տղայոց և աղջկանց)
կը վաճառենք խիստ ատան գներով :